թեամբ։ Հպատակվելով ժողովրդական կամքին, մենք պատրաստ ենք նոր քայլեր անել առաջադիմութեան ճանապարհի վրա, որ բաց է ֆրանսիական ժողովրդի առաջ»։ Այդ նախագիծը պատգամաւորների ժողովը ընդունեց երկար ծափահարութիւններով։

Գամբետտայի նախագիծը առանձին ուշադրութիւն չը դրծեց հասարակական կարծիքի վրա։ Մամուլը մեծ մասամբ յարձակվում է նրա վրա և շատ քիչ լրագիրներ գովում են նրան։ Լրագիրներից շատերը պատրաստականութիւն են յայտնում ներողամտութեամբ վերաբերվել նոր կառավարութեան խոստումներին և սպասել նրա գրական գործերին։ „Temps“, „Journal des Débats“ և „Siècle“ չափաւոր լրագիրները ցաւակցութիւն են յայտնում, որ Գամբետտա չը կարողացաւ համաձայնվել հեղինակութիւն ունեցող այնպիսի մարդկերանց հետ, ինչպէս Ֆրէյսինէ և Լէօն Սէ, և բաւականացաւ երկրորդական անձինքներով, որոնք առաջ „République Française“ լրագրի խմբագրութիւնն էին կազմում։ Մինչև անգամ այժմեան Ժողովին մինիստր Գուժար մի ժամանակ այդ լրագրի աշխատակից է եղել։ Գամբետտան առհասարակ ընտրեց երիտասարդ և անյայտ գործակիցներ, ուշադրութիւն չը դարձնելով նրանց վրա, որոնք գրաւված են իրանց անուան փայլով։ Իսկապէս կառավարութեան գլխաւոր գործիչը և ճառախօսը Գամբետտա կը լինի, իսկ մնացած մինիստրները նրա կողմնակիցները և նրա կամքի հլու հպատակներն են։ Հետևապէս նոր մինիստրութիւնն էլ նոյնքան հաստատ և տևողական կը լինի, որքան հաստատ և տևողական է Գամբետտայի անձնական ազդեցութիւնը։ Ուրիշ բան կը լինէր, եթէ Գամբետտա ստիպված լինէր գործել այնպիսի մարդկերանց հետ, որոնք սովոր են անկախ քաղաքականութեանը։ Այն ժամանակ անհամաձայնութիւններ կը պատահէին և „երևելի մինիստրութիւնը“ ինքն ըստ ինքեան կոչնչանար։

Գամբետտա դիտմամբ չը հրաւիրեց Ֆրէյսինէին և Լէօն Սէին։ Նա կամենում էր ազատ լինել և հիմնվել իր հեղինակութեան և իր կողմնակիցների ուժանդի և աշխատասիրութեան վրա։ Իսկապէս երկրին բոլորովին հարկաւոր չէ անպատճառ ծեր և յայտնի մարդկերանցից կառավարվել, որոնք ապրում են մի անգամ իրանց ձեռք բերած հեղինակութեան օգնութեամբ։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՑԻՑ

—

Կ. Պօլիս, 10 Նոյեմբերի

Կ. Պօլիս գալից յետո, առաջի անգամ եմ այնպիսի ջերմ փափագով ձեռնարկում ձեզ գրելու նամակիս, ինչպէս այս անգամ. առաջին անգամ է պատահում ինձ կանգնած լինել այնպիսի քաղցր պարտաւորութեան առաջ, ինչպէս այժմ, երբ թարգման եմ կանգնում Հայաստանի ամենաառնապակ ներկայացուցիչների՝ Կ. Պօլսի բեռնակիրների կողմից ռուսահայ գրագէտների առաջ։ Մէկ շաբաթ է, որ բնակարանս յետ դառնալու ժամանակ, մթնադէմից բաւական ուշ, ինձ ասում են թէ մի խումբ հայ համալսարանի դռնէս առաջ կանգնած, ինձ են ուզել տեսնելու։ Կարծելով դոցա այն սովորական պանդուխտներից, որոնք դիմում են իրանց մի գործ ճարելու համար բարեխօս լինելու խնդիրքով, շատ էլ ուշադիր չեղայ այդպիսիների գալուն գնալուն։ Վերջապէս այսօր երեկոյ հանդիպեցի նոցա հետ երես առ երես և ամբողջ մի քանի ժամ խօսելուց յետո, ահա շտապում եմ հաղորդել ձեզ ինչ լսեցի և զգացի։

Եկողները Սեբաստիայի վիլայէթի հայաբնակ խուռնավիլ գիւղիցն էին, որը այդ վիլայէթի մէջ նոյն քաջանուշակ անունն է վայելում, ինչ Դավալու գիւղը Երևանի նահանգում և Ջրաբերդը Ղարաբաղի մէջ։ Այդ գիւղի բնակիչները այնչափ անուանի են իրանց կորչութեամբ շրջապատող Աշրեթ ղօշքիր ասվող քիւրդ ցեղի մէջ, որ մեծամեծ բէյերը կը գան հեռու տեղերից դոցա մօտ քաւորութիւն (կնքաւորութիւն) հաստատելու համար։ Ըստ նշանաւոր երեոյթը այն է, որ օտար ցեղերի հետ այդպիսի սերտ յարաբերութիւններ վարելով, փոխանակ ընդհանուր հայկական ակնածութեան օտարների առաջ, այնպիսի խրոխտ և տիրապետական կողմից են ցոյց տուած իրանց, որ քիւրդ բէյերը ենթարկվելով նոցա ազդեցութեան, շատ անգամ ամբողջ ամիսներով իրանց ընտանիքը և որդիքը հիւր են բերում խուռնավիլցոց մօտ էրմէնի թերթիյէ (հայկական ազնուարարոյութիւն) սովորելու համար։

—«Քանի հոգի խուռնավիլցի կաք Կ. Պօլիս» հարցրի։—«Մօտ հարիւր մարդ» ասեցին։—«Եւ այսպիսի գեղեցիկ ազամարդիկ բեռնակրութեան արժան մարդիկ էք, որ այդպիսի պարապմունքների մէջ կը մաչէք ձեր կեանքը» նկատեցի տխրութեամբ։— «Իրաւունք ունէք, էֆէնդի, բայց ինչ անենք, որ մեր երկրում մի բան չը գիտենք, որ նրանով կարողանանք աշխատել այնչափ, որչափ Կ. Պօլիս բեռնակրութեամբ» պատասխանեց հինգ մարդից մի երիտասարդը, որը եթէ պատահմամբ Պետերբուրգի նահանգի սահմանները ընկնէր, առանց հարցուփորձի, Պրէօբրաժենսկի գունդի աջ թեւապահներից մինը կը լինէր։—«Է՛, ինչ կուզէք»։—Մենք եկել ենք ձեզ մօտ մի խնդիրքով, բայց աֆ (ներողութիւն) կանենք. մենք կուզենք, որ դուք մեզ օգնէք մի քանի գրքերով, եթէ ունէք ձեզ մօտ նոցանից աւելորդները։— «Ի՞նչ կանենք գրքերը» հարցրի, կարծելով թէ իրանց ընթերցանութեան համար էր այդ, բայց ո՛ւ բաւականութիւն՝ յայտնվեց, որ այդ մարդիկ ամենատաժան կեանք վարելով նեխված մայրաքաղաքի մէջ, այնչափ հետամուտ են իրանց հայրենիքի զարգացման, որ ձեռնարկած են մի տեսակ միսիոնեական գործի։ Օգուտ քաղելով նորանից, որ վերոյիշեալ բազմաթիւ քիւրդ ցեղը օրէց օր աւելի մեծ հակում է ցոյց տալիս խուռնավիլցոց և նոցա դրացի հայերի հետ խառնվելու համար, կորիչ գիւղացիք շտապել են կազմել իրանք իրանց մէջ Լուսաւորչական անունով մի ընկերութիւն, որի նպատակն է մի կողմից քիւրդաբնակ գիւղերի մէջ բերանացի քարոզչութիւն անել, միւս կողմից էլ շարժական ուսումնարաններ պահել քիւրդ թաքուններին մէջ։— «Ձեզ ո՞վ սովորացրեց այդ բանը» հարցրի զարմացմամբ, առաջի անգամ լսած լինելով մի այսպիսի երեոյթի մասին հայ հասարակ ժողովրդի մէջ։—«Ո՞վ պէտք է մեզ սովորացնէ» նկատեց նոյն պարթևանձ երիտասարդը, կարծես վիրաւորվելով իմ հարցից։—«Ո՛չ, ես նորա համար եմ հարցնում, ասեցի, որ այդպիսի մի բան այսչափ ժամանակ ոչ ոքից չեմ լսած»։ Որքա՜ վրա հետաքրքիր պատգամաւորութիւնը մէկը միւսին ընդհատելով սկսեց այնպիսի դասախօսութիւն անել ինձ իրանց ազգային պարտաճանաչութեան համար, որ էլ ուրիշ ուրախութիւն չէր լինի, եթէ այդպիսի մարդիկ պատահէր տեսնել Կ. Պօլսում Հիւգոյի «լոյսի» անունով խաղողների մէջ անգամ։—«Լաւ, ինչ տեսակ գրքեր են ձեզ հարկաւոր և ինչպէս պիտի օգուտ քաղէք նոցանից»։— «Ինչ տեսակ կուզէք տուէք. միայն թէ հայերէն գրքեր լինեն, որ քիւրդերի մէջ կարդալով. թարգմանենք նորանց որ հայն էլ ազգ է. հայերն էլ տէր ունեն աշխարհիս մեծ մեծ քաղաքներում» ասեցին։—«Եթէ այդպէս է, լաւ է, որ լրագիրներ ստանաք»։—«Լրագիր կուզենք ըստանալ, բայց թանգ է, իսկ մենք հազիւ կարողանում ենք եօթը վարժապետ պահել, ամեն մէկին տասը ոսկի (հարիւր ռուբլ) տալով տարեկան»։—«Ինչպէս, այստեղ բեռնակրութիւն էք անում, իսկ այնտեղ եօթը վարժապետ պահում, բայց ո՞րտեղից էք տալիս այդ ռոճիկները»։— «Էֆենդի, մեր օրվայ աշխատածից ամեն մէկը մեզնից տարեկան տուրք է տալիս, որ ուղարկում ենք վարժապետների „համար“։ — «Լաւ, մթթէ ձեզնից լրագիրները փոշ կուզեն»։—«Էֆենդի, կուզեն. ահա մէկ շաբաթ է որ մեր երկրացի մի քահանայ միջնորդ ենք գցել Մասիսի մօտ, որ փոխանակ 13 մէջիդիէ առնելու, մեզնից 10 մէջիդիէ առնէ տարեկան, որովհետև 10 մէջիդիից էլ երկուսը պ. Ակ. Ռ.-եանն է խոստացել տալու, բայց Մասիսի խմբագիրը չէ համաձայնվում, իսկ մենք էլ նորա ուզած գրամը չենք կարող տալ»։—«Ո՛՛ պատուական և ազնիւ «Մասիս», բացականչեցի մտքիս մէջ, մինչև սրտիս խորքը յուզվելով այսպիսի յուզիչ տեսարանից, որը ներկայացնում էին գիրք մուրացող խեղճ մարդիկ, որոնց սակայն այդ էլ մերժում են։ Պօլսի ճառաբան «ազգասէրները»։—«Լաւ, ասեցի, ես կը գրեմ ձեր մասին ռուսահայերին, որ նոքա ձեզ համար գրքեր էլ և լրագիրներ էլ ձրի ուղարկեն»։—«Ո՛, էֆէնդի, ոտդ պագնենք, քեզ համար միշտ Աստուծուն կաղօթենք, եթէ մի այդպիսի լաւութիւն անէք» ամեն կողմից ձայնակցեցին ուրախալից ձայնով։ «Դուք էք մեղաւոր, որ մինչև հիմայ չէք ասել ինձ այդ, երբ դա ոչ թէ լաւութիւն անել է ինձ համար, այլ մի այնպիսի պարտաւորութիւն, որը եթէ մոռանամ, իմ ռուսահայ բարեկամները էլ ինձ իրանց մէջ չէին ընդունի» ասեցի յարմարվելով նոցա զարգացման աստիճանին։ Իրանց հեռաւոր եղբայրների այսպիսի հայրենասիրութիւնից, խեղճերից մի երկուսի աչքին արտասուք ցայտեց։ Մի վայրկեան տիրեց մի տիրաղգաց լռութիւն, որը հազիւ կարողանալով ընդհատել, սկսեցի աւելի ևս քաջալերել թէ իրանց այդպիսի ազնիւ գործի համար ռուսահայերը այնչափ ուրախ կը լինեն, որ գուցէ փոխադարձաբար էլ օգնութիւն անեն իրանց։ «Ո՛չ, ո՛չ, էֆէնդի. այդ կողմից մենք ոչ ոքին չենք ուզենայ բեռ լինել, փառք Աստուծոյ մենք առողջ մարդիկ ենք, մենք կաշխատենք և մեր աշխատանքով կը կատարենք մեր ազգային պարտքը»։

Այս բանակցութիւնների ժամանակ ամբողջ տունը, որի մէջ ես բնակութիւն ունեմ, ժողովված է եղել նախասենեակում լսելու համար թէ այս ինչ երկար զրոյց է, որ շարունակվում է մի խումբ բեռնակիրների հետ։ Հասկանալով այցելուների սրտաշարժ պատգամաւորութեան նպատակը, տան տիրոջ երկու օրիորդները, որ հայ-կաթոլիկ են, ուրախութիւնից յուզված ճիչ բարձրացրին տան մէջ իրանց դասագրքերը որոնելով դէս և դէն հայաստանցի բեռնակիրներին նուիրելու համար։ Իսկ ինձ ուրիշ բան չունենալով սեղանի վրա հայերէն, բացի երկու բարեկամներից ինձ նուիրած մի «Զայն հրապարակախօսի» և մի «Սոխակ Հայաստանի», վեր առայ երկուսն էլ տուեցի նոցա, աւելացնելով նոյնպէս և մի հատ «Գամառ-Քաթիպայի» նոր տպագրութիւնը, որը այդ օր նոր էի փոխ առել իմ բարեկամ գոկ. Փեշթիմալչեանից։ Խեղճերը չչկշռված այսչափ մի մեծ ուրախութիւնից, սուրբ մասունքների պէս փաթաթեցին բոլոր գրքերը թաշկինակների մէջ ու հարիւր բերան աղօթք անելով, դուրս գնացին, խոստանալով նախ այդ գրքերը կարդալ իրանց այստեղի ժողովներում, իսկ յետոյ ուղարկել հայրենիք իրանց վարժապետներին հեռու երկրից եկած այդ սուրբ պատգամաւորներին քիւրդերին ևս մատակից անելու համար։

Ահա այսպիսի մի պատգամաւորութեան կողմից է, որ այսչափ հաճելի պարտաւորութիւն եմ համարում ինձ համար դիմել բոլոր բարեսէր հայ խմբագիրներին և հեղինակներին, որ նոքա չը զլանան իրանց մտքի արդիւնքները նուիրել այն մարդիկներին, որոնք Հայաստանի ծոցում ինքնաբերաբար ձեռնարկած են այն գործին, որը մի փոքրիկ կոնակից գոյացած անհուն շարժման ալիքների կարող է փոխվել, եթէ պ. պ. Սմբատ Շահ-Ազիզ, Բաֆֆի, Գամառ-Քաթիպայ, Աւագ-Դրիգորեան, Գաբչանց, Ազայեանց, Բարխուդարեանց և ուրիշները բարեհաճեն իրանց հեղինակած կամ հրատարակած աշխատութիւնների գոնէ մի մի օրինակը նուիրել, ուղարկելով նոցա Կ. Պօլիս ռուսական փոստով Յարութիւն Համբարեանի անունով Poste restante վերնագրով։ Այստեղ ստանալով այդ գրքերը, նոքա կը կարողացվեն համ այստեղ իրանց մէջ, համ էլ մեծ պրօպագանդա կարող էին անել Հայաստանի խորքում։ Ես ասում եմ ուղարկել մի մի օրինակ, աչքի առաջ ունենալով հեղինակների և հրատարակիչների առանց այն էլ արած մեծ անձնական զոհաբերութիւնները, բայց եթէ մի բարի մարդ գուրս գար, որը իր հաշուով տասը տասը հատ «Թենթը», «Գամառ-Քաթիպայ», «Զայն հրապարակախօսի» և «Սոխակ» երգարանը նուիրէր, ո՜ ինչ մեծ բարութիւն արած կը լինէր իր հեռաւոր հայ եղբայրներին։ Իսկ գալով հայ խմբագիրներին, քաջայոյս եմ, որ ոչ «Մեղու Հայաստանին», ոչ «Պսակը» և ոչ «Բժշկական թերթը» մի վայրկեան անգամ կը տատանվեն իրանց թերթերը ուղարկել նոյն վերոյիշեալ հասցէով, ինչպէս որ հաւատաք եմ, որ դուք էլ «Մշակի» մի ձրի բաժանորդութիւն ևս կը շտապէք աւելացնել այն ցուցակի մէջ, ուր այդպիսի բաժանորդագրութեանց թիւը վաղուց արդէն հարիւրից անցած պիտի լինի։ Այս մասին թող կանխաւ ընդունեն իրանց մօտ միջնորդող ջերմ շնորհակալիքը այն ամենքը, որոնք ուշադիր կը լինեն այսչափ բարի գործին։ Ցմանապէս կը յիշեցնենք մեր բարեկամ Յովակիմ Գեղամեանցին, որ նա ևս չը մոռանայ իր «Զէնեաթ-զէնեաթ» գրված մասին, որ մեծ հրահանգիչ ազդեցութիւն կարող է ունենալ Հայաստանում նորան ընթերցող գիւղական հասարակութեան վրա։ Էլ հարկաւոր է արդեօք ասել թէ պ. Տէր-Ղևոնդեանցի «Մայրենի լեզուն» որչափ կարեւոր է այս պարագայում։ Գրքերը և լրագիրները ուղարկողների անունները պարտաւորութիւն կը համարեմ իր ժամանակին յիշել «Մշակի» մէջ։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզի լրագիրների խօսքերով, կայսրութեան անկումից յետոյ Ֆրանսիայում տասներեք առաջին մինիստրներ են եղել, ութը արտաքին գործերի մինիստրներ և քսան ու մէկ ներքին գործերի մինիստր։ Գամբէտտան մինիստրների խորհրդի տասն և չորրորդ նախագահն է և արտաքին գործերի իններորդ մինիստր։ Արտաքին գործերի ամենաերկարատև կառավարիչը դուքս Դէկազն էր, որը այդ պաշտօնի մէջ չորս տարի մնաց։

—«Temps» լրագրին Կ. Պօլսից հաղորդում են, որ Բ. Դուռը յունական կառավարութեանը դիմեց մէկ շրջաբերականով, որով պահանջում է Թիւրքիայի մէջ եղած փոստատների անյապաղ փակումն։ Եթէ նշանակված ժամանակից երեք օր անցած Յունաստանը չի կատարի այդ պահանջը, այն ժամանակ Թիւրքաց կառավարութիւնը սպառնում է ուժով փակել նրանց այնպէս, ինչպէս որ Յունաստանը վարվեց Թիւրքաց փոստատան հետ Լարիսում։

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ Բերլինի Ֆրանսիական դեսպան Սէն Վալիէի հրաժարականը իր պաշտօնից կարելի է վերաբերել այն բանին, որ ինքն իր կղերական համոզմունքների պատճառով կարելի չը համարեց ծառայել մէկ այնպիսի կառավարութեան մէջ, որը յայտնի հակակղերական բնաւորութիւն ունի։

—«Кавказъ» լրագրում կարդում ենք։ «Մէկկայից ստացված վերջին լուրերի հիման վրա, այնտեղ իւրաքանչիւր օր ժանտախտից մինչև 500 մարդ են մեռնում։ Շոգենաւերի տէրերը հրաժարվում են ուխտաւորներին սրբազան քաղաքից վերադարձնել։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 18 Նոյեմբերի։ Պաշտօնական հեռագիրը հերքում է Էրզրումի շրջակայքներում ժանտախտի երևալու լուրը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 Նոյեմբերի։ Հրամայված է Պետիգօրսկի շրջանը երկու բաժին անել։ Պետիգօրսկի և Նալչինսկի։ „Прав. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. Բարձրագոյն հրամայած է. նահանգական պաշտօնական թերթերը ազատել ցենզուրայից և հրատարակել նահանգապետների պատասխանատուութեամբ։ Գաւառական մասնաւոր թերթերը ենթարկվում են փոխ-նահանգապետի ցենզուրային այն տեղերում, որտեղ ցենզօրներ չը կան։ Նոյեմբերի 17-ին բաց դռներով սկսվեցաւ Շերվաշիձէի դատաստանական գործի քննութիւնը։ Դատարանի մէջ եղած հասարակութիւնը բացառապէս զինուորական դասից է։ Կարդացվեցաւ մեղադրական սկզբը։ Մեղադրվածը իրան մեղաւոր խոստովանեց, բայց մի նոյն ժամանակ ստիպված պատմել վնասվածների յանդգնութիւնը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ